# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 փետրվարի 2021 թվականի N 20 - Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի համակարգի հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված կոմպլեկտավորումները,

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի կոմպլեկտավորումները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի հանրակրթական ուսումնական հաստատությունների նախակրթարանների 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի կոմպլեկտավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի ՝ համաձայն հավելված 3-ի:

01.02.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4008600095

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ.Պողոսյան